ՄԱՔՍԻՄ ԳՈՐԿՈՒ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՄԻՈՒԹՅՈՒՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ

Ապրիլի 16—19-ին Երևանում, պետական համալսարանի նախաձեռնությամբ և Մոսկվայի Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի ու Հայաստանի գիտությունների ակադեմիայի հասարակական գիտությունների բաժանմունքի մասնակցությամբ տեղի ունեցավ գիտական կոնֆերանս՝ նվիրված Մ. Գորկու ծննդյան 100-ամյակին։ Կոնֆերանսին մասնակցում էին երկրի 34 ազգությունների ներկայացուցիչներ։ Կոնֆերանսը ունեցավ երկու պլենար նիստ։ Գործեցին գրականագիտության, արվեստագիտության, թարգմանչական սեկցիաները։ Մասնակցում էին 80 հյուրեր Սովետական Միության եղբայրական հանրապետություններից և արտասահմանի սոցիալիստական երկրներից։ Կարդացվեցին 73 զեկուցումներ։

Առաջին պլենար նիստում Երևանի պետական համալսարանի ռեկտոր, ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանն իր բացման խոսքում նշեց Երևանում Գորկու ծննդյան 100-ամյակին նվիրված համամիութենական գիտական կոնֆերանսի հասարակական, կուլտուրական, գիտական նշանակությունը, նրա դերը Գորկու ստեղծագործությունների էլ ավելի մասսայականացման և խորությունմասիրության գործում։

Հայաստանի կոմունիստական կուսակցության կենտկոմի, Հայկական ՍՍՀ կառավարության և Գերագույն սովետի նախագահության անունից կոնֆերանսի ներկայացուցիչներին ողջունեց ՀԿԿ կենտկոմի քարտուղար Ռ. Խաչատրյանը։ Ժամանակը միայն հաստատում է Գորկու մեծությունը,— ասաց նա։— Սա առաջին հարյուրամյակն է, հետագայում մարդկությունը միշտ նշելու է մեծ գրողի, հիանալի քաղաքացու ծննդյան հետագա հարյուրամյակները։ Իմաստուն մրտածող էր Մ. Գորկին, նա լի էր հավատով դեպի մարդը, նրա ճակատագիրը։ Գորկին իր ստեղծագործությամբ դաստիարակում է առաջադեմ մարդկությանը ապագան գեղեցիկ դարձնելու ոգով։ Սովետական բոլոր ժողովուրդները հպարտանում են Գորկիով, որովհետև նրանք բոլորն էլ այս կամ այն չափով իրենց գրական զարգացմամբ պարտական են Գորկուն։ Սովետական երիտասարդության համար Գորկին միշտ անօրինակ ոգևորության աղբյուր էր՝ սխրանքների իր կոչով։

«Մ. Գորկին և արդիականությունը» թեմայով զեկուցումով հանդես եկավ Գորկու անվան համաշխարհային գրականության ինստիտուտի դիրեկտորի տեղակալ Վ. Շչերբինան։ Պրոֆեսոր Գ. Լոմիձեն խոսեց Գորկու ստեղծագործությունների ինտերնացիոնալ կոնցեպցիայի մասին։ Բանասիրական գիտությունների դոկտոր Կ. Զելինսկին պատմեց գրողների հետ Գորկու ունեցած կապերի և նրա ազդեցության մասին։ Պրոֆ. Մ. Մկրտչյանի զեկուցման թեման էր «Գեղեցիկի իդեալը Մ. Գորկու ստեղծագործության մեջ»։

Երևանյան կոնֆերանսը բառի իսկական իմաստով համամիութենական էր, որովհետև նրան մասնակցում էին Սովետական Միության բոլոր հանրապետությունների ու ինքնավար մարզերի լավագույն գորկիագետ գիտնականները։ Կոնֆերանսում արժեքավոր զեկուցումներով հանդես եկան Մոսկվայի, Ուկրաինայի, Բելոռուսիայի, Մերձբալթյան հանրապետությունների, անդրկովկասյան հանրապետությունների, Միջինասիական հանրապետությունների գիտնականները։ Այդ որոշ չափով նաև համաեվրոպական կոնֆերանս էր, որովհետև նրան մասնակցում էին Եվրոպայի սոցիալիստական մի քանի երկրների՝ Չեխոսլովակիայի, Գերմանական Դեմոկրատական Հանրապետության, Լեհաստանի և Բուլղարիայի գորկիագետ գիտնականներ, որոնք պատմեցին, թե ինչպես է եվրոպական առաջադիմական հասարակայնությունը պայքարել և պայքարում Գորկու համար։

Կոնֆերանսը ցույց տվեց, որ Սովետական Հայաստանում նույնպես զարգանում է գորկիադիտությունը։ Այդ բանի վկայությունն էին մի շարք հայ գիտնականների զեկուցումները։

Կոնֆերանսում հանդես եկան նաև Սովետական Միության որոշ փոքր ժողովուրդների ներկայացուցիչները, որոնք պատմեցին այն բարերար ազդեցության մասին, որ ունեցել է Գորկին չեչենական, կալմիկական, չուվաշական, ադիգական, օսական, աբխազական, բուրյաթական և այլ ժողովուրդների գրականությունների վրա։

Երևանյան գորկիական կոնֆերանսը արծարծեց ժամանակակից գրականագիտական մի շարք հանգուցային հարցեր՝ կապված սոցիալիստական ռեալիզմի հիմնադրի ստեղծագործության ավանդների զարգացման հետ և նոր փուլ հանդիսացավ գորկիագիտության մեջ։

Պրոֆ. Ռ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ